

## ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄՈՂԵՌՆ ՄԱՐԴՆ ՈՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ

Ասում են որ արևի տակ նոր ոչինչ չկայ, որ պատմութեան անիւը դառնում է և կրկնում է հինը, բայց և պնդում են որ անցեալն անցել է, նորն է գնահատելի. անցածը մեռել է, ներկան է ապրում, իրաւունքը ներկայինն ու ապագայինն է:

Տրեղերական պատմութեան պրոցէսի մէջ հնի և նորի, անցեալի և ներկայի միջև մի տարբային կատարի կռիւ է նկատում և այդ կռիւն անվերջ է թւում, որովհետեւ ինչ որ ներկայ է՝ շուտով անցեալ է դառնում և իւր պայքարն սկսում է մի նոր ներկայի և մի նոր ապագայի հետ: Բայց ուշի ուշով դիտելով կտեսնենք, որ պատմութեան դարերը հնի և նորի այս կռուի թափով հաւասարապէս աչքի չեն ընկնում, թէպէտ բոլոր տարբերում այս կռիւը գոյութիւն ունի, բայց այդ ամէն մի դարում նոյն զօրութեամբ հանդէս չի գալիս: Պատմութեան մէջ դարեր կան, որոնք ըստ երևոյթին հնի և նորի մի երանելի խաղաղութեամբ են աչքի ընկնում: Նորը հնազանգուել է հնի անցեալ մեծութեանը, փառքին, հեղինակութեանն ու աւանդութեան. միջնադարը մեզ օրինակ է թւում է, թէ այդպիսի դարերում մարդկութիւնը ձեռք է բերել իւր բարձրագոյն երջանկութիւնը. բայց վնայ այդ դարերին և վնայ այդ երջանիկ մարդկութեանը, որ ծոյլ քնով քնել և սալանալ գիտէ, որ չի ձգտում հնի հետ պայքարելով՝ նոր ճանապարհներ գտնել և նոր ուղիներ հարթել: Այդ պատճառով մենք ողջունում ենք «Renaissance» վերածնութեան դարը, ողջունում ենք այդ կռիւը, որ բռնկուեց սխորատիբայի և հումանիզմի միջև, որը ըստինքեան երջանիկ չէր միջնադարեան կրօնաւորի և հայեցողի բախտաւորութեամբ, բայց նա փոթորկի թափով մարտնչում էր հնու-

Թեան կաշկանդող այժերի դէմ՝ և այդ կուտում՝ երկնեց և ծնեց նոր դարի մարդկութիւնը:

Հայութեան կեանքում ևս եղել են վերածննտ թեան դարեր և եթէ դիտողութիւնը մեզ չի խաբոււմ, մենք գտնուում ենք մի այդպիսի դարաշեմքին: Հայի իրականութեան մէջ մահուան և կեանքի կռիւ է յայտարարուած հնի և նորի միջև, երկու կողմերն ևս հանդէս են եկել իրենց աւաքիտութիւններովն ու կրքերովը և մենք՝ եթէ ուզում ենք ապրել, պարտաւոր ենք ընտրութիւն անելով մէկի կամ միւսի կողմն անցնել: Մի կողմի վրայ կանգնած են հնութեան ներկայացուցիչները, փորձառութեան ահագին պաշարով զինուած՝ նոքա կռուի են դուրս դալիս հնութեան մշակած և փորձած գործելակերպով, իսկ միւս կողմում՝ կանգնած է նորելուկների կամ՝ մտքեւանականների բանակը, հայեազրը դէպի ապագան ուղղած, նրա սրտում աւելն ու կրակ, իսկ գանգում՝ վառ վառ երազներ: Մտքեւան մարդը անփորձ երիտասարդի է նման, ապագայի նախազգացումը կրճքին, լաւատես, ուրախ և ապահով իւր յաղթանակին: Հնի հակառակ նա սիրում է այս աշխարհն ու այս կեանքը, որը այնչափ դեղեցիկ է և որից բղիտում են անթիւ հմայքներ: Մտքեւան մարդը հնից շատ բանով է տարբերում, հինն ունի իւր կուռ աշխարհայեացքը, նորը գիտէ և, սրմունք է թարմը, բայց կամ՝ դեռ չի գտիլ և կամ՝ գտածն էլ որոշ չէ: Հինն ունի իւր մշակուած ճաշակն ու արուեստը: Նորը նրանից գոհ չէ և սրմունք է գեղարուեստի և ճաշակի սահմաններում՝ նոր աշխարհներ յայտնագործել: Հինն ունի իւր սոցիալական կարգերը և ինքնարարական է այդ գրութիւնից, մտքեւան մարդը երազում է, ձգտում է նոր աշխարհ ստեղծել սոցիալական նոր գրութիւններով: Հինն ունի իւր հնուանդ կրօնը դորա դէմ՝ յանդիման դնում է մտքեւան մարդը կրօնի իւրատեսակ ըմբռնումը, որը այնքան էլ հաստատ կամ՝ քարացած չէ, Թւում է թէ հինը բացարձակ ճշմարտութիւնը իւր կողմն ունի, որովհետև չի տատանւում, որովհետև անպայման հպատակում է այդ կարգերին, որով առաջ է

բերում խաղաղութիւն մարդկանց հոգիների և հանրակե-  
ցութեան մէջ. իսկ մոգեռն մարդը անհանգիտ է, երազ-  
ներով և կասկածներով լի և որոնող. նա հայրերի գաած  
ճշմարտութեամբ չի բաւականանում, նա ձգտում է դէպի  
բացարձակ ճշմարտութիւնը և թէպէտ մոլորում է և  
էնթարկում է ծանր ծանր փորձութիւնների, բայց չի  
վհատում:

Անհատական ազատութիւնն և զարգացումը այս է  
քարոզում մոգեռն մարդը. եւ նա փնտռում է մի աշ-  
խարհայեացք, որ ազատութեան, հաւասարութեան, եղ-  
բայրութեան իդէաներին համապատասխան լինելով՝ նաև  
անպայման գործնական և իրական լինի՝ մարմնացած իրա-  
կանութիւն: Փորձի և գիտութեան ճշմարտութիւնը՝ այս է  
փնտռում նա, որովհետև սա է օգնում նրան ճանաչելու  
թէ՛ ինչ կայ կամ ինչ չկայ: Գտնելով բնագիտութեան  
օրէնքները՝ նա ձգտում է տիրել բնութեան:

Մոգեռն մարդը դժգոհ է իւր ունեցածից, թափառող,  
որոնող և անհանգիտ: Նա յիշեցնում է ճշմարտութեան  
ծարաւով բռնուած այն երիտասարդին, որին Շիլլէրը եր-  
գել է «Das verschleierte Bild zu Saïs» բանաստեղծու-  
թեան մէջ: Այդ երիտասարդը թափառել է, կտրել, ան-  
ցել է շատ ծովեր և շատ ցամաքներ ճշմարտութիւնը  
գտնելու: Վերջը հասնում է Եգիպտոս, ուր մի Ռոտոն-  
գում գտնում է մի քողարկուած արձան: Նորա հարցին  
քուրմերից մէկը պատասխանում է. այդ քողի տակը  
կանգնած է ամբողջ մարմնացած ճշմարտութիւնը, բայց  
Աստու պատուէրն է, որ ոչ մի մահկանացու չպիտի յան-  
գըզնի այդ քողը բաց անել, մինչև ինքը բաց կանխ  
երիտասարդը տուն է վերադառնում, նորա գիտութեան  
ծարաւը նորան մրկում է: Ամբողջ ճշմարտութիւնը գըտ-  
նելու է եկել և և իւր որոնածը կանգնած է իրենից ոչ  
հեռու, բաւական է վեր կենալ, ցատկել ցանկապատից,  
վերայնել արձանի քողը: Մտածելն ու անելը մէկ է ի-  
նում. բայց հետևեալ առաւօտը նրան գտնում են ար-  
ձանի պատուանդանի առաջ տարածուած խելակորոյս և

անբարբառ: Նա մտնում է գերեզման, առանց ազատաց  
սերնդին աւանդելու, թէ նա ինչ տեսաւ այդ քողի տակը:  
Բայց մոգեռն մարդը տենչում է անհամբեր սրչափ կա-  
րելի է շուտ վերցնել այդ քողը նշմարտութեան վրայից՝  
չվախենալով ոչ Աստու և ոչ հնութեան ներկայացուցիչ-  
ների սպառնալիքներից: Հները դայրանում ու փրփրում  
են այս տեսակ յանդուգն, արկածախնդիր փորձերի վրայ:

Ո՞վ կարող է շնկատել, որ այս երկու հասանքները  
նաև մեզա ում օրհասական կռիւ են մղում, և որովհետև  
մեր պատմական դարդացումը այն ընթացքն է ունեցել,  
որ եկեղեցին իւր մէջն է ամփոփած եղել հայ ժողովրդ-  
դի կուլտուրական բարիքները, հէնց այդ պատճառով մո-  
գեռն հայի յարձակումներին ի միջի այլոց ենթարկում է  
նաև եկեղեցին, որը անցեալի ներկայացուցիչն է հանդի-  
սանում: Նա մի ժամանակ համապատասխանելով իւր կոչ-  
մանը, բաւարարութիւն է տուել նախկին դարերի մո-  
գեռն մարդկանց ձգտումներին: Ներկայուժս ենթարկում  
է յարձակման և պարտաւանքի, իսկ դորանից տուժում է  
ոչ միայն եկեղեցին, այլ և քրիստոնէական կրօնը, որով-  
հետև շատ շատերը եկեղեցին և կրօնը միմեանցից տար-  
բերել չեն կարող: Հայի ամբողջ պատմութեան մէջ XX  
դարը աչքի է ընկնում նաև նորանով, որ հայութեան  
որոշ տոկոս կտրուել է իւր <sup>եկեղեցուց</sup> և կրօնից:

Այս փաստը իբրև իրողութիւն հաստատելուց յե-  
տոյ, մենք հարց բարձրացնել կարող ենք, թէ մոգեռն  
մարդուն, ինչպիսին մենք վերև նկարագրեցինք, կարո՞ղ է  
արդեօք քրիստոնէական կրօնը, բաւարարութիւն տալ  
թէ քրիստոնէութիւնն ևս իբրև հնութիւնից մնացած և  
մաշուած կրօն պիտի արհամարհուի նկատուելով իր և  
ալեգարդ ծերունիների աւանդութիւն, որը մոգեռն մարդ-  
կանց համար անպէտք է:

Բայց այս հարցին պատասխանելուց առաջ, պէտք է  
որոշել, թէ քրիստոնէական կրօնը ո՞ր քրիստոնէութիւնն  
ենք հասկանում: Եթէ քրիստոնէութիւն ասելով պիտի  
հասկանանք եկեղեցու շէնքը և նորա մէջ կատարուած

ձէսերն ու արարողութիւնները, եթէ պէտք է հասկանանք եկեղեցական Հերարխիան կամ զանազան դոգմաներ, եթէ պէտք է հասկանալ վանականի խօսքը և նորա կրօնաւորական կեանքը կամ խարազնազգեօտ ճգնաւորին անսպասում և կամ եկեղեցական հայրերի ճառերն ու շարականները, այն ժամանակ պէտք է պնդենք, որ այս բոլորը մտեան մարդու սրտին և հոգուն ոչինչ չեն ասում. եթէ այդ է քրիստոնէութիւնը, այն ժամանակ մոգեան մարդը մօտայից ընկած շարի նման դէն կձգի այդ կրօնը:

Բայց եթէ քրիստոնէութիւն անլով մերն հասկանում ենք միշտ մի նորագոյ, միշտ մի յառաջդիմող կեանք, որը համաձայն է այն կրօնաբարոյական սկզբունքներին, որի հիմքն է կազմում, սիրիք Աստուծուն և քո ընկեր մարդուն և եղիր կատարեալ, որքան քո երկնատօր հայրը կատարեալ է, ուրեմն եթէ քրիստոնէական կրօն դոգմա չէ, այլ միշտ յառաջ ձգտող և վերոյիշեալ սկզբունքներով ճշմարտութիւն որոնող մի կեանք, այն ժամանակ յիշաւի մի այդպիսի կրօն ըստ ամենայնի կհամապատասխանի մոգեան մարդու ձգտումներին և զօրավիգ կլինի նորան անվերջ ձգտելու ճշմարտութեան ճանապարհի վրայ: Մոգեան մարդը որոնող էակ է. քրիստոնէական կրօնը ուղիղ հասկացում ճշմարտութիւն որոնող կրօն է: Նա իւր հետ ոգներին ուղարկում է հետապնդել ճշմարտութեան և նա ձեռք կբերի այդ ճշմարտութիւնը ինչպէս գոյութեան կառում, այնպէս էլ ճշմարտութիւնը որոնելու խնդրում. անվհատ կորովով կգիմի իւր կէտ նպատակին:

Այսպէս ըմբռնելով քրիստոնէական կրօնի էութիւնը և ուսումնասիրելով նոր դարի մոգեան մարդու հոգեբանութիւնը՝ եկեղեցու վերանորոգութեան հարցը բարձրացնելու կարիք է զգացւում: